Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 17-ին ժամը 16^{00} –ին կայացած նիստի

Արձանագրություն N 3

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի առաջին նիստից հետո կատարված աշխատանքների մասին։
2. Հաշմանդամների հիմնախնդիրների իրագեկման միամսյակին նվիրված միջոցառումների ծրագրի մասին։
3. Այլ հարցեր։

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ

Ա. Համբարձումյան՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամները՝

Գ. Մալխասյան՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Բ.Եսայան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Տ. Հարությունյան՝ ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Ա. Ալավերդյան՝ "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության "ՈՒՆԻՍՈՆ" հ/կ նախագահ
Ա. Գրիգորյան՝ "Հայաստանի խուլերի միավորում" հ/կ նախագահ
Ս. Թադեւոսյան՝ "Հույսի կամուրջ" հաշմանդամ երեխաների եւ երիտասարդների իրավունքների պաշտպանություն" հ/կ նախագահ
Հ. Աբրահամյան Հայաստանի հաշմանդամների "Փյունիկ" միության նախագահ
Ա. Հակոբյան՝ "Հայաստանի կույրերի միավորում" հ/կ նախագահ
Ա. Մկրտչյան՝ " Սկարպ" առողջական կենտրոն" հ/կ նախագահ
Լ. Ներսիսյան՝ " Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա" հ/կ նախագահ

Ս. Օհանյան՝ "Հաշմանդամների "Փարոս" կրթության եւ մշակույթի զարգացման կենտրոն" հ/կ նախագահ

Ջ. Բաղդասարյան՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ /հանձնաժողովի քարտուղար/

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին հրավիրված էին նաև .

Ա. Ղուկասյան՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ՝ նախարարի առաջին տեղակալ Հ.Դարբինյանի առաջարկով

Ժ. Ասատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ՝ նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով

Ց. Խաչատրյան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման վարչության վերահսկողության բաժնի պետ՝ նախարարի տեղակալ Վ.Տերտերյանի առաջարկով

Հրավիրվածներ՝

Ֆ. Բերիկյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Հ. Խաչատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ա. Սողոյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Գ. Խուդաբաշյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի և հավասար հնարավորությունների ապահովման բաժնի աշխատակիցները։

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստը, նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ հանձնաժողովի նախագահ Ա. Համբարձումյանը։

Ողջունելով հանձնաժողովի անդամներին՝ նախարարը կարևորեց պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համակարգված աշխատանքը հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելու, նրանց համար հավասար հնարավորություններ ապահովելու, սոցիալական պաշտպանություն իրականացնելու գործում։

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ լսեցին՝ տիկին Բաղդասարյանին

Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ, հանձնաժողովի քարտուղար Ջ. Բաղդասարյանը ներկայացրեց տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի առաջին նիստից հետո կատարված աշխատանքների մասին /տեղեկանքը կցվում է/։

Նշեց, որ հաստատվել են մարզային հանձնաժողովների կարգերը, բոլոր մարզերում գումարվել են նիստեր։ Մրցույթ է հայտարարվել «Մատչելի համայնք» թեմայով։ Կազմակերպվել է հանձնաժողովի անդամների և ԲՍՓՀ նախագահների աշխատանքային հանդիպում, որի արդյունքում հանձնաժողովներին տրվել է հանձնարարական՝ հաշմանդամների անհատական վերականգնողական ծրագրերում ներառել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց շրջակա միջավայրի մատչելության պայմանները։

2009թ. հաշմանդամների տարեկան ծրագրում ներառվել են հասարակական կազմակերպություններից ստացված առաջարկությունները, ծրագիրը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ԱԺ։

Մեծ ուշադրություն է դարձվել հաշմանդամների համար մատչելիությունը ապահովելու նպատակով համապատասխան քաղաքաշինական լուծումների խնդիրներին։ Իրավիճակը պարզելու համար հարցումներ են ուղարկվել բոլոր մարզային հանձնաժողովներ, ստացված պատասխանները վկայում են, որ այս առումով վիճակը մտահոգիչ է։ Համայնքների բյուջեներում շրջակա միջավայրի մատչելիության ապահովման նպատակով միջոցներ չեն նախատեսվում, աշխատանքները հիմնականում կատարվում են հասարակական կազմակերպությունների ուժերով /տեղեկանքը կցվում է/։

Արտահայտվեցին՝

Լ.Ներսիսյանը առաջարկեց հաշմանդամների համար նախատեսվող շինարարական աշխատանքներում ընդգրկել նաև հաշմանդամ անձանց։

Բ.Եսայանի կողմից առաջարկություն արվեց Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստերին հրավիրել քաղաքաշինության նախարարությունից ներկայացուցիչներ, որպեսզի տեղեկատվություն ներկայացվի հաշմանդամ անձանց համար նախատեսված շինարարական նախագծերի, փողոցների լուսավորության, անցումների մատչելիության, փոխադրամիջոցների հարմարեցման վերաբերյալ։

Որոշեցին՝

- կազմել ժամանակացույց տեղերում հանդիպումներ կազմակերպելու մարզային հանձնաժողովների անդամների հետ՝ ներգրավելով ՀՀ քաղաքաշինության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագետներին և ազգային հանձնաժողովի անդամներին.
- Ճշտել ՀՀ քաղաքաշինության նախարարությունից թեքահարթակների հետ կապված համապատասխան նորմատիվների արկայությունը և

անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել.

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ լսեցին՝ տիկին Բաղդասարյանին

Ներկայացրեց Հաշմանդամների հիմնախնդիրների իրազեկման միամսյակին նվիրված միջոցառումների ծրագրի նախագիծը: Նշվեց, որ Հաշմանդամների հիմնախնդիրների իրազեկման միամսյակին նվիրված միջոցառումների ծրագրում ընդգրկվել են ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվելիք միջոցառումները /կցվում է/:

Արտահայտվեցին՝

Հ. Աբրահամյանը ներկայացրեց «Փյունիկ» հասարակական կազմակերպության կողմից նախատեսվող միջոցառումները:

Որոշեցին՝

- մեկ շաբաթվա ընթացքում լրամշակել ծրագիրը և ներկայացնել հաստատման.

- հաստատել միամսյակի անցկացման ժամկետը՝ ս/թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը.
- Հաշմանդամների հիմնախնդիրների իրազեկման միամսյակին նվիրված ծրագիրը ուղարկել բոլոր մարզային /ք.Երևանի/ հանձնաժողովներին տեղում նմանատիպ միջոցառումներ կազմակերպելու համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար,
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով
զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ՝ Ա. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ջ. Բաղդասարյան